

**ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019**

**ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ ՓԲԸ»**





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում /Երևան/ .....	5
1.1.2. Ջրամատակարարման համակարգի կառավարում /Մարզեր/ .....	9
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում .....	13
1.3. Ջրահեռացման համակարգ .....	13
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	14
1.5. Էներգահամակարգ .....	15
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	16
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>17</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	18
2.2. Հասույթ .....	18
2.3. Գանձում .....	20
2.4. Դեբիտորական պարտքեր .....	21
2.5. Ջրաչափեր .....	22
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում ....	23
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>24</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	25
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	26
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	28
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ .....	29
3.5. Ջրատար համակարգի բարելավում .....	31
3.6. Գոտիավորման ջրի հաշվառման խումբ .....	33
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>34</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>37</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	38
5.2. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն .....	38
5.3. Դասընթացներ .....	38
5.4. Մասնակցություն սեմինարին .....	39
5.5. Մասնակցություն ԱԻ և ԶՊ վարժանքներին .....	40
5.6. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	40
<b>6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>41</b>
6.1. Ինտերակտիվ համակարգ .....	42

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1.1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ /ԵՐԵՎԱՆ/

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարառորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

### Քաղաք Երևան



Փ. Մոսկովյան



Փ. Ագաթանգեղոս

● «Արևելք» ՍՍ «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Մոսկովյան և Նալբանդյան փողոցների խաչմերուկում տեղամասի աշխատակիցների կողմից իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է քայքայված  $D=100$ մմ պողպատե խողովակի  $L=100$ գծ/մ երկարությամբ հատվածը և կառուցվել է  $D=80$ մմ  $L=3$ գծ/մ և  $D=50$ մմ  $L=6$ գծ/մ երկարությամբ ջրագիծ: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ  $Q=6,0$  լ/վ ջրաքանակ:




Մոսկովյան և Նալբանդյան փողոցների խաչմերուկ



● Նորագյուղ 310 հասցեում թվով 17 բնակիչ բաժանորդներին սնող  $D=100-150$ մմ թուջե ջրագծի մոտ  $L=15$ գծ/մ հատվածը գտնվում էր քայքայված վիճակում և հաճախակի էին կրկնվող վթարները: Տեղամասի աշխատակիցների կողմից թուջե խողովակը փոխարինվել է  $D=75$ մմ  $L=15$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով, իրականացվել են անհատական միացումներ, տարածքից դուրս տեղադրվել են թվով 17 ջրաչափական դիտահոր և ջրաչափական սարք: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ  $Q=4,0$  լ/վ ջրաքանակ:

● «Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ջրաշեն 1-ին փողոցի D=100մմ L=360գծ/մ վթարային վիճակում գտնվող պողպատյա խողովակներն ամբողջովին քայքայված էին, ինչն էլ հանգեցնում էր հաճախակի վթարների, ջրակորուստի և հետագա շահագործման անհնարինությանը: Խնդրի կարգավորման, բնականոն ջրամատակարարման ապահովման և ջրագծի թողունակության բարձրացման համար «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են D=110մմ L=360գծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Հին ջրագծից սնվող թվով 37 բաժանորդների սահմանագատման կետերում տեղադրվել են նոր ջրաչափական դիտահորեր և ջրաչափեր: Կառուցվել է թվով 2 դիտահոր և տեղադրվել է թվով 1 d=100մմ փական: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:



● Հաղթանակ գյուղ Կաթի կոմբինատի ՕԿՁ-ից սնվող գոտում կատարվել են չափուժներ ու վթարադրոնողական աշխատանքներ: D=300մմ թուջե խողովակի վրա հայտնաբերվել և վերացվել է Q=10լ/վ քանակությամբ գաղտնի վթար: Փականներով կարգավորվել են ջրամատակարարման ճնշումները: Աշխատանքի արդյունքում բացառվել են ջրամատակարարման գրաֆիկի շեղումները ու նախկին 8-ժամյա ջրամատակարարման գրաֆիկի փոխարեն ունեցել ենք 17-ժամյա ջրամատակարարարում:

● Երևանի «Հաղթանակ» թաղամասի ջրամատակարարման շարունակականության բարելավմանն ուղղված աշխատանքները շարունակելու նպատակով գոտիավորման աշխատանքների ժամանակ հայտնաբերված և վերացված գաղտնի վթարների արդյունքում թաղամասում ճնշումները բարձրացել էին թույլատրելիից ավելին: Դրա համար թաղամասը սնող ընդհանուր ջրագծի վրա տեղամասի կողմից տեղադրվեց D=200մմ ճնշման կարգավորիչ փական: Որի արդյունքում նվազեցվեց ավելցուկային ճնշումները, իսկ թաղամասի ջրամատակարարումը դարձավ 17 ժամ:



● Ագատություն-Դավիթ Անհաղթ փողոցների խաչմերուկի մոտ D=100մմ, L=200մ վթարված ջրագիծը խցափակումով շահագործումից հանվել է: Աշխատանքի արդյունքում տնտեսվել է Q=2լ/վ ջրաքանակ:



● Կիևյան 22 շենքի D=100մմ, L=30մ վթարային ջրագիծը փոխարինվել է D=63մմ պոլիէթիլենե խողովակով՝ ներսրակման եղանակով: Աշխատանքի արդյունքում խնայվել է Q= 0.5լ/վ ջրաքանակ:

- Կումիտաս 19 շենքին սնուցող  $D=63$ մմ,  $L=30$ մ ջրագիծը փոխարինվել է նոր  $D=100$ մմ պոլիէթիլեն խողովակով: Աշխատանքի արդյունքում խնայվել է  $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:

- «Էրեբունի» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ջրաշեն թաղ. 1 փողոցում շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով ներդրումային ծրագրի շրջանակներում, ս/թ. մարտ ամսից նոյեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածում վերակառուցվել է  $d=100$ մմ պողպատե վթարված ջրագծի 900գծմ հատված  $d=110$  մմ պ/էթ խողովակներով, որի արդյունքում վերացվել է ջրակորուստները, 4-ժամյա ջրամատակարարումից վերականգնել է գրեթե 24 ժամյա, բացառվել են ապօրինի ջրամիացումները և խնայվել է շուրջ 8լ/վրկ ջրաքանակ:



- Նաև կառուցվել է թվով 2 դիտահոր և տեղադրվել է 2 հատ  $d=100$ մմ փական, ինչպես նաև փոխարինվել է թվով 107 բնակիչ-բաժանորդի ջրագծեր և սահմանագատման կետերում տեղադրվել են ջրաչափական դիտահորեր, փականներ և ջրաչափական սարքեր:


- **Հարավ.** Խարբերդում իրականացված վթարաորոնողական աշխատանքների, չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է վթար՝  $Q \approx 1$ լ/վ ջուր:

- **Հյուսիս.** Դուրյան թաղամասում իրականացված վթարաորոնողական աշխատանքների, չափումների շրջանակներում Չարենցի 15 շենքի դիմաց հայտնաբերվել և վերացվել է վթար՝  $Q \approx 1$ լ/վ ջուր:




- Երևանի Արաբկիր թաղամասի Ն. Զարյան, Արաբկիր 41 և 43 փողոցների ջրամատակարարման ցանցում ուսումնասիրություններ և կարգավորումներ կատարելու նպատակով տեղադրվել են գիշերային ծախսաչափեր, որոնց տվյալների վերլուծությունից և կորերի ուսումնասիրությունից պարզ է դարձում ցանցում վթարների առկայությունը կամ բացակայությունը: Այնուհետև իրականացված գոտիավորման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է 2 վթար, որի արդյունքում ցանցում բարձրաձել է ջրի ճնշումը: Ճնշումները կարգավորելու և թույլատրելիին համապատասխանեցնելու նպատակով Ն. Զարյան փողոցի  $D=200$ մմ ջրագծի վրա տեղադրվել է  $D=100$ մմ ՃԿՓ:


Ջրամատակարարման գոտիներ մտած ջրաքանակների հաշվառման և վթարների հայտնաբերման նպատակով գիշերային ծախսերը ուսումնասիրելու համար ուլտրաձայնային հոսքաչափեր են տեղադրվել նաև Կենտրոնի «Չարենց», Արարկիի «11», Ավանի «Դուրյան», Վանաձորի մաքրման կայանի «Չուխաջյան», Գյումրիի «3.1», «Մուշ», Սևանի «Նաիրյան», Արտաշատի «գ. Նորշեն» գոտիների գլխամասերում, ինչպես նաև դրանց ենթագոտիներում: Որոշների սխեմատիկ պատկերները ներկայացված են ստորև:



Աղոնց 17 շենքի մոտ




Նաիրի Քաղաքի Երբանցք





## 1.1.2. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ /ՄԱՐԶԵՐ/


● Վարդենիսում գտնվող գորամասին օժանդակելու, ջրամատակարարումը բարելավելու նպատակով տարածքում իրականացվել են լայնածավալ գոտիավորման և վթարավերացման աշխատանքներ: Հայտնաբերվել է 3 հատ գաղտնի վթար՝ ընդհանուր  $Q=11$ լ/վ ջրաքանակով, դրանք անմիջապես վերացվել են տեղամասի կողմից: Հայտնաբերված և վերացված վթարների արդյունքում հնարավոր է դարձել փոխարինել գորամասի տարածքում գործող պոմպակայանի 22 կՎտ հզորությամբ պոմպը 7.5 կՎտ հզորությամբ պոմպով, որի արդյունքում խնայվել է նաև էլեկտրաէներգիա: Այժմ պոմպը մղում է  $Q=10$ լ/վ, նախկին  $Q=21$ լ/վ-ի փոխարեն:



● Արմավիրի մարզի Մերձավան համայնքում ջրամատակարարումն իրականացվում էր 4 ժամյա գրաֆիկով, առավոտյան և երեկոյան 2 -ական ժամ՝ ՕԿՁ-ի չոր խցում տեղադրված 2 խումբ, հզոր (2 x 5 կՎտ և 15 կՎտ) պոմպերի միջոցով: Ջրամատակարարման տևողությունն ավելացնելու նպատակով կատարվեցին լայնածավալ գոտիավորման աշխատանքներ և տրվեցին ինժեներական լուծումներ: ՕԿՁ-ում տեղադրված մակարդակաչափի, տարբեր ջրագծերի վրա տեղադրված ճնշման լոգերների տվյալների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ հնարավոր է գյուղի որոշ թաղամասերում իրականացնել շուրջօրյա, իսկ մի փոքր հատվածում 12 ժամյա ջրամատակարարում: Տեղադրվել են նոր փականներ, իսկ հզոր պոմպակայանի փոխարեն 2 հատ 5 հարկանի շենքերի մոտ իրականացվեց բակային պոմպակայանի մոնտաժում, որտեղ տեղադրվեց 2.2 կՎտ հզորությամբ 1 պոմպ: Չնայած այն հանգամանքին, որ դեռ գյուղում իրականացվում են գոտիավորման և վթարավորոնողական աշխատանքներ, այժմ գյուղի արդեն իսկ 80% տարածքի ջրամատակարարումը բարելավվել է և դարձել 24 ժամ:

### Քաղաք Վանաձոր

● Երևանյան 147 շենքի մոտով անցնող խողովակը, որը կառուցվել է դեռևս ԽՍՀՄ-ի տարիներին, պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել  $D=108$ մմ  $L=18$ զմ խողովակով: Արդյունքում խնայվել է 2լ/վ ջրաքանակ:



Երևանյան 147 շենքի ջրամատակարարման սխեմա

## Քաղաք Գյումրի



Շիրակացի փողոցի ջրամատակարարման սխեմա

● Գյումրի քաղաքի Թբիլիսյան Միմաֆոր 3 տան բնակչից ահագանգ է ստացվել, որ տան հիմքի տակ առկա է ջրի ուժեղ արտահոսք: Շիրակ տեղամասի և Գոտիավորման բաժնի աշխատակիցների կատարած ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ Թբիլիսյան Միմաֆոր կոչվող թաղամասը սնուցող  $D=150$ մմ թուջե խողովակը, որը անցնում է նշված տան տակով, վթարվել է, և այն անհնար է վերանորոգել: Տների իրար խիտ լինելու պատճառով ջրագծի շրջանցումը ևս անհնար է դարձել, ուստի որոշում է կայացվել ներանցման միջոցով վթարված հատվածը հանել շահագործումից: Արդյունքում շահագործումից հանվել է  $D=150$ մմ,  $L=25$ զմ թուջե խողովակ, և անցկացվել է  $D=63$ մմ ՊԷ  $L=25$ զմ նոր խողովակ՝ խնայելով  $0,6$ լ/վ ջրաքանակ:



Թբիլիսյան Միմաֆոր թաղամասի ջրամատակարարման սխեմա




Գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճ. 1 փակ ջրամատակարարման սխեմա

● **Գյուղ Ախուրյան.** Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ախուրյան համայնքի Կուլակավան կոչվող թաղամասում ջրագիծը վթարվել է: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վթարվել է  $D=50$ մմ պողպատե խողովակը, որը սնուցել է նախկին տնակային ավանի մի քանի տնակների: Քանի որ տնակները վաղուց ապամոնտաժվել էին, իսկ խողովակաշարը առկա էր և գտնվում էր անմխիթար վիճակում, ուստի որոշվել է այն խցափակել միացման կետում՝ Օղակային (Արևելյան) կոչվող ջրատարից: Արդյունքում շահագործումից հանվել է  $D=50$ մմ,  $L=315$ զմ պողպատե խողովակ՝ խնայելով  $0,9$  լ/վ ջրաքանակ:

## Քաղաք Աշտարակ

● Մասունիկ համայնքին սնուցող  $D=400$ մմ ջրագծի վրա տեղադրվել է  $D=150$ մմ ճնշման կարգավորիչ փական: Աշխատանքի արդյունքում ավելացել է ժամային գրաֆիկը՝ նախկին 5 ժամի փոխարեն 8 ժամ, ինչպես նաև կարգավորվել է ջրամատակարարման ճնշումը:



## Քաղաք Արտաշատ

● Արևշատ գյուղում իրականացված վթարաորոնողական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է 1 վթար՝  $Q \approx 2$ լ/վ:



## Քաղաք Արարատ



● Արարատ ՕԿՁ-ի մոտ և ցեմենտի գործարանի տարածքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է 1 վթար՝  $Q \approx 53$ լ/վ:

## Քաղաք Սևան

● Քաղաք Սևանից դեպի Վարսեր գյուղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է վթար  $Q \approx 5$ լ/վ:

## Քաղաք Գավառ

● Քաղաք Գավառ Միքայելյան փողոցում տեղադրվել է  $D=150$ մմ ճնշման կարգավորիչ, որի շնորհիվ ջրի ճնշումը  $P=3.6$ մթն դարձել է  $P=1.5$ մթն. և տնտեսվել է  $Q \approx 11$ լ/վ ջուր, ինչպես նաև 230 ԿՎտ պոմպի աշխատաժամանակը կրճատվել է մոտ 1 ժամով:



## Գյուղ Գուլգարք



● Գուլգարք գյուղի 6-րդ և 9-րդ փողոցների ջրագծերի պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար 6-րդ փողոցում փոխարինվել է  $D=133$ մմ  $L=6$ գծմ, իսկ 9-րդ փողոցում՝  $D=133$ մմ  $L=11$ գծմ վթարային ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է 2լ/վ ջրաքանակ:

## Վայոց Ձորի մարզ

● Եղեգնաձոր քաղաքի Նոր Ավան թողամասում գտնվող Այգեձոր փողոցը և նրբանցքները սնող  $d=63$ մմ անորակ պոլիէթիլենային խողովակաշարը շարքից դուրս էր եկել և հաճախակի կրկնվող վթարների պատճառով առկա էին ջրակորուստներ, իսկ վթարների վերացման ժամանակ ջրագրկվում էին Այգեձոր, Պ. Պոռչյան, Վ. Համբարձումյան փողոցների և նրբանցքների թվով մոտ 200 բնակիչ-բաժանորդներ:

● «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից Այգեձոր փողոցի և նրբանցքի  $D=63$ մմ  $L=385$ գծ/մ երկարությամբ հատվածը փոխարինվել է նոր պոլիէթիլենային խողովակներով, որի արդյունքում տնտեսվել է մոտ 2լ/վրկ ջրաքանակ, ինչպես նաև բարելավվել է բնակիչ-բաժանորդների բնականոն ջրամատակարարումը:



## Լոռու մարզ



● Ստեփանավան համայնքի Ռուսիական թաղամասում ուսումնասիրությունների արդյունք պարզվեց, որ թաղամասի ջրամատակարարումը կարող ենք իրականացնել Նովոսելցովո ջրաղբյուրից Գետավանի պոմպակայանի փոխարեն:

● Ռուսիական թաղամասի մեր գործող բաժանման հանգույցում տեղադրվեց 12 ԿՎտ հզորությամբ ինվերտորային համակարգով պոմպ, ինչը հնարավորություն սովեց Գետավանի պ/կ-ից նախկինում 37ԿՎտ 6 մթն մղման պոմպի փոխարեն այն իրականացնել 2 մթն նոր տեղաթրված պոմպակայանով:

Նոր սերնդի ինվերտորային համակարգով պոմպակայանը ապահովում է constant ճնշումով 24ժամյան ջրամատակարարում: ծախսելով մոտավորապես 3 անգամ ավելի քիչ էլ.էներգիա:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

և ջրահեռացման համակարգում կատարված

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	406
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	20,918
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	12,555
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2,550
Ջրաչափական հանգույցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	10
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3,919
Կառուցված ջրագիծ	մ	3,574.2
Կառուցված կոյուղագիծ	մ	161.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	29
Փոխարինված փական	հատ	37
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	820
Մաքրված դիտահոր	հատ	155
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	23.2
<b>Վերացված վթարներ</b>	<b>Չափման միավոր</b>	<b>Քանակ</b>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,432
Ջրահեռացման ցանցում	հատ	2,682
Պոմպակայաններում	հատ	178
Մաքրված անձրևընդունիչ	հատ	631

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	708	1039	589

**1.2. ԶՐԱԶԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ**

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	388	14	0	1	0	1	0	0	1	405
Փոխարինված	252	20	4	6	3	3	0	0	1	289
Տեղափոխված	5	1	0	0	0	0	0	0	0	6
Տեխ. Ակտ	202	155	2	8	1	2	0	0	1	371
Ընդամենը	847	190	6	15	4	6	0	0	3	1071

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 1071 ջրաչափ: Կատարված աշխատանքների 79,08 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

**1.3. ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	2300	269	4
2	Մաշտոց	2285	290	21
3	Շահումյան	2754	313	0
4	Զեյթուն	500	0	0
5	Շիրակ	560	0	60
6	Ալավերդի	1510	18	0
7	Ապարան	0	49	0
8	Արթիկ	0	0	0
9	Աշոցք	140	0	0
10	Բերդ	0	14	10
11	Իջևան	940	0	8
12	Լոռի	2472	0	3
13	Նոյեմբերյան	740	0	6
14	Սպիտակ	440	0	0
15	Ստեփանավան	0	0	0
16	Թալին	0	0	0
17	Տաշիր	120	9	0
18	Էջմիածին	0	0	0
19	Չարենցավան	1215	26	1.5
20	Արովյան	2940	99	12

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում զճ/մ
21	Հրազդան	2260	45	0
22	Աշտարակ	2895	26	0
23	Կենտրոն	110	321	12
24	Հյուսիս	0	292	0
25	Հարավ	0	411	0
26	Էրեբունի	150	169	0
27	Արմավիր	0	125	0
28	Արտաշատ	0	84	0
29	Արարատ	0	85	3
30	Մասիս	0	44	0
31	Գավառ	400	41	0
32	Սևան	240	94	5
33	Մարտունի	0	21	0
34	Վարդենիս	0	15	0
35	Ճամբարակ	54	18	0
36	Դիլիջան	0	46	0
37	Վայք	0	6	0
38	Եղեգնաձոր	0	14	0
39	Զերմուկ	0	21	0
40	Սիսիան	24	81	6
41	Գորիս	0	35	10
42	Կապան	0	70	0
43	Մեղրի	0	22	0
	Ընդամենը	25049	3173	161.5

#### 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՅԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Սևանի N3 և N5 կոյուղու պոմպակայաններում կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ: Պոմպերը դուրս են բերվել հորերից, ստուգվել է բոլոր պոմպերի շարժիչներում ջրի առկայությունը, յուղի և անտիֆրիզի պարունակությունը, առանցքակալների որակը, ինչպես նաև մալուխի հերմետիկությունը: Ձննվել և մաքրվել են բոլոր հակադարձ փականները, ինչպես նաև կառավարման վահանակի բոլոր սարքավորումների աշխատանքը:
- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում փոխարինվել են ռոտորի կոտրված ածխե թիակները և օդի ֆիլտրերը, որոնք ներկայումս աշխատում են անխափան: Ստուգվել են բոլոր սարքավորումները:
- Վարդենիսի կոյուղու մաքրման կայանում վերանորոգվել է կոյուղու պոմպի շարժիչը: Ապամոնտաժվել, մաքրվել են, վերամոնտաժվել են խցանված հակադարձ փականները, ստուգվել են ջրի մակարդակի տվիչները:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Ստորև աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասները.

Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	69,374	10,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	79,460	25,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	169,750	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	148,185	21,6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	115,747	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	14,685	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,465	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	23,200	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	16000	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	6,283	0	0

### 1.5. ԷՆԵՐԳԱՅԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակն ըստ աշխատանքի նկարագրի
Պոմպի աշխատանքի զննում կարգավորում	107
Էլ. սարքերի զննում կարգավորում	21
Աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, առանց կապի տեղադրում, բանող անվի փոխարինում, վերանորոգման հավաքածուի տեղադրում	0
Վերանորոգման հավաքածուի տեղադրում	4
Ավտոմատիկայի կառավարիչ	2
Լիսեռի տեղադրում	0
Առանցքակալի տեղադրում	2
Փականի տեղադրում	0
Բաքի միացման դետալներ	3
Աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից	12
Լիսեռի փոխարինում	1
Բանող անվի փոխարինում	2
Շարժիչի վերանորոգում	2
Ֆազի բացակայության ռելե	2
Բարձր ճնշման ռելեի փոխարինում	5
Խցուկի տեղադրում	3
Թողարկիչի տեղադրում	1
Պոմպի տեղադրում	0
Մեմբրանի տեղադրում	1
Ցածր ճնշման ռելեի փոխարինում	3
Էլ. հոսանքի լարերի նորոգում	1
Էլ. Ավտոմատ անջատիչի կարգավորում	0
Այց	37
Ընդամենը	209

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Արևելք» ՍՍ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հոկտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 6 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 2 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 15 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել:

Փոխարինվել են թվով 61 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, անտիֆրիզ և գտիչներ:

Թվով 9 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Նորոգվել է թվով 2 մեքենայի փոխանցման տուփ, փոխարինվել են ատամսանիֆները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիֆներ, առանցքակալներ, կիսաստիններ, խտաբուկեր, սատելիտներ:

Թվով 2 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 5 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման մղիչներ և ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 6 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուլի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարների ժամանակին վերացմանը:





ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏԿՅԱԼՆԵՐ

Ս.թ. ապրիլից կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՄՏՍՏ սպասարկման տարածքներից Աբովյան, Էջմիածին, Մասիս և Ապարան տեղամասերը դարձան ԵՏՍՏ սպասարկման տարածքներ մոտ 65,000 բաժանորդներով:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 259, իսկ ՄՏՍՏ-ում՝ 61 պայմանագրային աշխատակից: 01.11.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում՝ 325,087, իսկ ՄՏՍՏ-ում՝ 171,053 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - 2019թ. հոկտեմբեր ամիսների ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	428,326	312,236	72,9
		Իրավաբանական անձ	20,022	12,851	64,2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	199,692	164,555	82,4
		Իրավաբանական անձ	8,275	6,498	78,5
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	628,018	476,791	75,92
		Իրավաբանական անձ	28,297	19,349	68,38

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	462,958	379,985	82,1
		Իրավաբանական անձ	23,190	16,357	70,5
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	253,491	199,692	78,8
		Իրավաբանական անձ	9,932	8,275	83,3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	716,449	579,677	80,91
		Իրավաբանական անձ	33,122	24,632	74,37

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:


ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 330 նոր բաժանորդ: իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 213 նոր բաժանորդ: ՄՏՍՏ տեղամասերում հոկտեմբեր ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 17,000 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 10 տոկոս:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ

Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգավիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

2018 թվականի ընթացքում ՄՏՍՏ սպասարկման տարածքում փոխարինված ջրաչափերի վերաբերյալ 2019 թվականին իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ սպառման ծավալներն ավելացել են մոտավորապես 54 տոկոսով:


Սպառում	2018թ. փոխարինված ջրաչափերի քանակ	Միջին ամսական սպառումը, խմ		Աճի %-ը
		Հին ջրաչափով խմ/ամիս	Նոր ջրաչափով խմ/ամիս	
Բնակիչ-բաժանորդ	12,976	5,5	9,0	63
Իրավաբանական անձ	1,073	186,2	285,2	53




Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՏՍ-ում ստուգաչափվել է 1,973, իսկ ՄՏՏՍ-ում՝ 951 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 09.2019
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	1,193	546	79	1,818
		Իրավաբանական անձ	81	64	10	155
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	401	331	69	801
		Իրավաբանական անձ	64	72	14	150
	Ընդամենը		1,739	1,013	172	2,924

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ՄՏՏՍ-ում հոկտեմբեր ամսվա ընթացքում փոխարինված 951 ջրաչափերի մոտ 51 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՏՍ-ի մոտավ 140,565 մ<sup>3</sup>, իսկ ՄՏՏՍ-ի՝ 72,283 մ<sup>3</sup> վերահաշվարկված հատույթ (62.7 % Երևան և 37.3 % մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հոկտեմբեր ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1,661,543 մլն դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 505,101 մլն դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻԿՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՄ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 146 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 12.9 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 115 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.6 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018-2019 թ. հոկտեմբեր ներառյալ		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		2017-2019 թթ. ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
4,925	5.795.552.110	3,998	334,755,083	94	14,264,985	5,737	758,472,064	2,124	167,685,067

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 81,18 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 18,82 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին.

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան Երկաթուղի» ՓԲԸ	14.897.386
2	Ագատաշեն համայնք	12.511.000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11.440.944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114.597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2. 680. 006. 883 ՀՀ դրամ:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.10.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում հոկտեմբեր ամսվա հատույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,069.9	1,447.0
Բնակիչ-բաժանորդներ	2,906.2	970.1
Իրավաբանական անձեր	1,163.7	476.5
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,816.6	506.3
Բնակիչ-բաժանորդներ	1,386.0	367.1
Իրավաբանական անձեր	430.6	139.2
Ընդամենը, այդ թվում	11.773	3906.20
Բնակիչ-բաժանորդներ	4292.2	1337.2
Իրավաբանական անձեր	1594.3	606.7

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 159.5 մլն դրամը կուտակվել է երեք բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը, «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

ՄՏՄՏ մատվ հանրապետական բյուջեի պարտքը 01.11.2019թ. դրությամբ կազմում է մոտ 103.0 մլն դրամ (Պաշտպանության նախարարություն, ՔԿՀ և այլն), որը կվճարվի առաջիկայում:

2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



## 2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.11.2019թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	448,825	378,705	84.4	22,507	16,349	72.6
	Առանց ջրաչափի	14,133	1,280	9.1	683	8	1.2
Մարզեր	Ջրաչափով	232,297	175,574	75.58	9,584	7,087	73.95
	Առանց ջրաչափի	21,809	1,372	6.29	240	4	1.67
Ընդամենը	Ջրաչափով	681,122	554,279	81.38	32,091	23,436	73.03
	Առանց ջրաչափի	35,942	2,652	7.38	923	12	1.30

Տվյալների բազայում 01.11.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	587,430	291,857	49.7	25,423	5,900	23.2
Մարզեր	265,839	71,012	26.71	10,856	1,900	17.50
Ընդամենը	853,269	362,869	42.53	36,279	7,800	21.50

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանուճներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4,261, իսկ մարզերում՝ 1491 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 229, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 462 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

*ԵՏՍՍ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր*

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2242	1787	79.7
գ.Պռոշյան	1533	984	64.1
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5287	1421	26.9

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Հոկտեմբեր ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 6,009, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,462, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 548, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 947, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 571, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 451 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 644 ջրաչափական սարք:

**2.6 ԱՊՕՐԻՆԻ ՍԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ**

Շարունակվում են ապօրինի միացուճների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուճների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	127	136,918	24,417,503
Մարզեր	1800	59,721	9,960,881
Ընդամենը	1927	196, 639	34,378,384

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ






### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հոկտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.3 %, ինչը նույնն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

#### Ջրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 29 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 12-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:



Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները:



ՃԿՓ-ների կարգաբերումներից հետո այդ գոտիներում տեղադրվել են հոսքաչափեր, որոնց տվյալներն արտացոլում են գոտիներում ջրաքանակի նվազեցումը:

Ստորև ներկայացված գրաֆիկներում պատկերված է կարգաբերման արդյունքում տնտեսված ջրաքանակը (≈ 1/4):






Հաշվետու ամսվա ընթացքում գոտիներում ջրաքանակների ուսումնասիրության և հոսակորուստների հայտնաբերման համար 10 հասցեներում տեղադրվել են Seba UDM-200 տիպի հոսաքաչափեր:

Ստորև ներկայացված է տեղադրված հոսաքաչափերի հասցեները և կորուստներ ունեցող գոտիների գրաֆիկները.


Հ/Հ	Մասնաճյուղ	ՇՏ	Հոսաքաչափի տեղադրման հասցեն
1	Արևմուտք	Մաշտոց	Դավթաշեն, 4-րդ թաղամասը սնող ջրատարի սկզբնամաս
2	Արևմուտք	Մաշտոց	Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 1/1 հասցեի հարևանությամբ (Արագեն)
3	Արևմուտք	Մաշտոց	Դավթաշեն, 4-րդ թաղամաս, պոլիկլինիկայի հարևանությամբ
4	Արևմուտք	Մաշտոց	Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 32- 44 շենքերը սնող ջրագծի միացման կետ
5	Արևմուտք	Արաբկիր	Մամիկոնյանց - Վրացական խաչմերուկ
6	Արևմուտք	Արաբկիր	Մամիկոնյանց 41 - ի դիմաց
7	Արևմուտք	Արաբկիր	Ն. Զարյան փ.
8	Արևմուտք	Արաբկիր	Մալխասյանց փ.
9	Արևմուտք	Արաբկիր	Մամիկոնյանց փ. -ի վերջնամաս
10	Արևմուտք	Արաբկիր	Ադոնց փ.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 2156 ԿՎտ.ժ. (0,5%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

*Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐՈՒՄ ԴՈՄՊԱԿԱՅԱՆԻ\**




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 97 հասցե, և 12 պոմպակայաններում հայտնաբերվել և վերացվել են թերություններ:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 4141,05 ԳՎտ.ժ կամ 16,5% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Էջմիածին




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 12270 ԳՎտ.ժ կամ 27,5% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Շիրակ




● Հոկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 362,784 ԳՎտ.ժ կամ 35,43% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

### Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 113,040 ԿՎտ.ժ կամ 5,0 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը ավելացել է 224,981 ԿՎտ.ժ կամ 5,18 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա




### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացվում են հոկտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	110
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	20
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	396
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	146
Մոդելավորման աշխատանքներ (փորձնական ընտրվել է Արարկիրը)	հատ	1
ԱՅ ձևաչափով քարտեզների տպում և տրամադրում	հատ	88
Վթարային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	2
Պլանային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	2
ՀՀ սեփական, բազմաբնակարանային և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքներ (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոտիների, ժամային գրաֆիկի), ֆիզիկական բաժանորդների տվյալների մշակում և մուտքագրում բազա	հատ	136,572
Կոյուղագծերի փոփոխություններ ԱՏՀ համակարգով	մետր	1124,67
Երևան քաղաքի կոյուղագծերի թվայնացում	մետր	198640,871
Կոյուղու դիտահորերի թվայնացում	հատ	5740
Տարբեր մարզերի գյուղերի տների և փողոցների թվայնացում	գյուղ	27
Կառուցված ջրագծեր	մետր	1007,9
Շահագործումից հանված ջրագծեր	մետր	678,12
Կառուցված կոյուղագծեր	մետր	281,2
Շահագործումից հանված ջրագծեր	մետր	271,2
Տեղադրված և փոխարինված փականներ	հատ	18
Հիդրանտների թվայնացում	վարչական շրջան	5
ԱՏՀ համակարգում ջրատարների ճիշտ աշխարհագրական դիրքով տեղադրում	հատ	5

### 3.4. ԿԱՐԳԱԿԱՐՄԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCADA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց հետևել և կառավարել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մաացորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:




Ընթացիկ ամսում ստեղծվել է «VIBER management» հավելվածը, որի միջոցով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի աշխատակիցներն արագ արձագանքում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման ողջ տարածքում առկա թերությունների հայտաբերմանը՝ վթարներ, ապօրինի միացումներ, ջրաչափական հանգույցների արտահոսքեր և այլն:

Միայն հոկտեմբեր ամսին վերոնշյալ հավելվածով ստացվել է ավելի քան 160 ջրագծի վթարի և 6 ապօրինի միացման վերաբերյալ հաղորդագրություն (116/վ ընդհանուր ծավալով): Վթարառավարական գնդակային աշխատանքներից հետո նույն հավելվածում պատասխանատու շահագործման տեղամասի կողմից հրապարակվում է աշխատանքները կատարելուց հետո վթարի վայրից արված լուսանկար: Այսպիսով, այս հավելվածի շնորհիվ հնարավոր է դարձել մեր ընկերության տարբեր ստորաբաժանումների արագ փոխգործակցությամբ ավելի կարճ ժամանակահատվածում լուծել համակարգում առկա խնդիրները:

«Արին Բերդ» ՕԿՁ-ից դեպի «Խարբերդ ՕԿՁ» ջրատարի վթարի հայտնաբերում: Մույն ամսում տվյալ ջրատարի վթար է գրանցվել 2 անգամ ընդհանուր 15լ/վ և 40լ/վ ծավալներով:

«Արին Բերդ» ՕԿՁ-ի հարակից տարածքով անցնող Գառնի ջրատարի վրա տեղադրված է հեռակառավարվող փական և ջրաչափ, որոնց միջոցով կառավարվում է դեպի Խարբերդ ՕԿՁ հոսող ջրաքանակը: Արդյունքը պարզ երևում է ստորև ներկայացված գրաֆիկական պատկերում, իսկ վթարի հայտնաբերման ժամանակ այդ տարբերությունը հասել է համապատասխանաբար մինչև 25լ/վ և 40լ/վ:



Այդ մասին հաղորդվել է Շենգավիթ ՇՏ-ին, որի աշխատակիցների կողմից պարզվել է վթարի ստույգ հատվածը: Վթարը վերացնելու համար անհրաժեշտ էր ջրագրկել այդ ջրագիծը, որպեսզի հնարավոր լիներ կատարել գործում: Ջրագրկելու համար SCADA հեռակառավարման ծրագրի միջոցով փակվել է «Արին Բերդի» տարածքում գտնվող փականը: Վթարը վերացնելուց հետո փականը բացվել է:

Առաջին նկարում վթարի ծավալը կազմում է 15 լ/վ, իսկ երկրորդում՝ 40 լ/վ:



Ագաթանգեղոս փողոցի ջրատարի ծախսաչափից ստացված տվյալներից պարզ է դարձել, որ տվյալ հատվածում առաջացել է ջրատարի վթար 8լ/վ ծավալով: Այդ մասին տեղեկացվել է Կենտրոն ՇՏ-ի աշխատակիցներին, ում կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը:




Նկ. 1

Նկ. 2

Վթարը վերացնելու համար հայտարարվել է վթարային ջրանջատում տվյալ փողոցում, որից հետո կատարվել են վթարավերականգնողական աշխատանքներ: Ստորև ներկայացված է Ագաթանգեղոս փողոցի ծախսաչափի գրաֆիկական պատկերը:




● «Չարենց» փողոցում տեղադրված ծախսաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ գոտում առաջացել է ջրագծի վթար 11/վ մեծությամբ: Այդ մասին տեղեկացրել ենք «Կենտրոն» ՇՏ-ի աշխատակիցներին, ովքեր Գոտիավորման աշխատակիցների օգնությամբ հայտնաբերել են վթարի ստույգ վայրը, որից հետո կատարվել են վթարավերականգնողական աշխատանքներ: Ստորև ներկայացված է Չարենց գոտում տեղադրված ծախսաչափի գրաֆիկական պատկերը:



● Ագարակ պ/կ-ից դեպի Կոշ պ/կ-ն ընկած հատվածում ջրատարի վթարի հայտնաբերում: Վթարը պարզվել է Կոշ պկ-ում տեղադրված մուտքային ճնշման տվիչից ստացված տվյալներից: Մուտքային ճնշման նվազման պատճառով պոմպային ագրեգատը անջատվել է: Այդ մասին տեղեկացրել ենք «Աշտարակ» ՇՏ-ի աշխատակիցներին, որոնց կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը, որից հետո Ագարակ պ/կ-ից պոմպը անջատվել է, որպեսզի ջրատարը ջրազրկվի: Վթարավերականգնողական աշխատանքներից հետո ջրամատակարարումը վերականգնվել է:



Ստորև ներկայացված է վերոնշյալ ճնշման տվիչից ստացված տվյալների գրաֆիկական պատկերը.



### 3.5. ԶՐԱՏԱՐ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱԿՈՒՄ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրատար խմբի կարգավորման խմբի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

#### Արգական-Քանաքեռ ջրատար


Ջրատարի վրա հայտնաբերվել և վերացվել է 7լ/վ թողունակությամբ վթար:



#### Կոզղաշեն համակարգ

● Շենիկ գյուղի ուղղությամբ հայտնաբերվել և վերացվել են վթարներ, որոնցից մեկը գաղտնի վթար է եղել ու դրա արդյունքում զգալիորեն նվազել է Կոզղաշեն պ/կ-ի ջրարտադրությունը: Վթարների վերացման շնորհիվ Շենիկ և Արգինա գյուղերում վերականգնվել է նորմալ ջրամատակարարումը:

Ստորև ներկայացված են վթարից հետո վերականգնած ջրամատակարարման գրաֆիկը և վթարին վերաբերող լուսանկարները.



### Գառնի-Արտաշատ ջրատար

● Ջրատարի վրա հայտնաբերվել և վերացվել են վթարներ  $\approx 5$ լ/վ ջրի արտահոսքով:



### Գառնի-Երևան ջրատար

● Ջրատարի վրա հայտնաբերվել է ապօրինի միացում  $D=80$ մմ, որի համար կազմվել է արձանագրություն համապատասխան ստորաբաժանման կողմից, որից հետո այդ միացման փականները փասսվել են (հետագայում ապամոնտաժելու նպատակով) ջրօգտագործու՝ անհնարին դարձնելու համար:



### Արզնի 2- Երևան ջրատար

● Ջրատարի վրա Գետամեջ գյուղում, առաջացել է վթար  $\approx 30$ լ/վ: Պարզվել է, որ փասսված է ջրատարի թուջե խողովակի շրջագծի մոտ կեսը: Համապատասխան նախապատրաստական աշխատանքներից հետո կազմակերպվել է ջրատարի կանգառ, որի ընթացքում վթարը կանխվել է «Ջեյթուն» տեղամասի ուժերով:

### Ապարան-Երևան ջրատար

● Վթարներ են հայտնաբերվել և վերացվել ջրատարից մինչև Նոր Երզնկա գյուղի ջրագծի վրա եղած հատվածում՝ գումարային 3լ/վ:



### Արարատյան պոմպակայան

● Արարատյան 3 և 4 հերթերի պ/կ-ում առկա են վթարներ, որոնց արտահոսքը կազմում է 20լ/վ, իսկ Արարատյան 3 ջրատարի վրա առաջացել են 6 վթարներ՝ գումարային 65լ/վ արտահոսքով:






### 3.6 գոտիպատկարում ջրի ճնշվածության հոտեր

«Արևելք» և «Արևմուտք» ՇՏ-ների շուրջ 51 գոտիներում ծախսաչափերի օգնությամբ կատարվել են ջրաքանակի, էլեկտրազանգի և կորուստների հաշվառման աշխատանքներ:

- Ընտրված գոտիներում ամենօրյա կարգով կատարվել է ջրի հաշվառում:
- Ընթացիկ ամսում երկու անգամ կատարվել են Պոռշյան և Քասախ գյուղերի ջրաքանակի չափման աշխատանքներ:
- Արևմուտքի մարզի Բաղրամյան գյուղում չափումների արդյունքում հայտնաբերվել է 7 լ/վ վթար, ինչից հետո կատարվել են տեղորոշման աշխատանքներ (կորեկիացիա):
- Ստուգայց է կատարվել Արևմուտքի մարզի Մրգաշատ գյուղ: Շուրջ 47 հորում ջրաչափից առաջ առկա է վթար:



- Ստուգայց է կատարվել Արևմուտքի մարզի Քարակերտ գյուղ: Ստուգայցերի արդյունքում պարզվել է հետևյալը.



- Հոկտեմբեր ամսին երկու անգամ կատարվել են Պոռշյան և Քասախ գյուղերի ջրաքանակների չափման աշխատանքներ:



ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ




Հոկտեմբերին Վեոլիա Ջուր ՓԲԸ Հանրային կապերի բաժինն ընթացիկ տարվա սկզբին ընդունված գործունեության ծրագրի համաձայն շարունակել է իր բնականոն աշխատանքը հասարակության հետ կապերի ապահովման և ամրապնդման ուղղությամբ, առաջին հերթին՝ զանգվածային լրատվամիջոցների հետ:

Ներկայումս Օպերատորի աշխատանքը պարբերաբար ներկայացվում է մոտ 40 լրատվամիջոցների, նպատակով ունենալով վերջիններիս միջոցով հանրության տեղյակ պահել գործունեության ու արդյունքների մասին:

Ընդ որում Հանրային կապերի բաժինն իր գործունեությունը կառուցում է հաշվի առնելով, որ արտաքին լրարանին ուղղված իր աշխատանքով/սպառողներ, տեղական ինքնակառավարման մարմիններ, ՋԼՄ-ներ, հասարակական կազմակերպություններ, այլն/ նպաստում է ընկերության գործարար համբավի բարելավմանը և, վերջին հաշվով, Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի ռեբրենդինգին հանրության շրջանում:

Ելնելով այս հանգամանքից, Հանրային կապերի բաժինը ճիշտ համարեց հաշվետու ամսին հիմնական շեշտը դնել հետևյալ 3 հիմնական ուղղությունների վրա.

- ▶ Սպասարկել ֆեյսբուք սոցիալական ցանցով ստացվող դիմում-բողոքները, այդ թվում երեկոյան ժամերին և հանգստյան օրերին;
- ▶ Հրատապ կերպով, կարելի է ասել՝ առցանց ռեժիմով իրականացնել ՋԼՄ-ների մոնիթորինգ և անմիջապես ընկերության ղեկավարությանը տեղեկացնել հրապարակումների, լրագրողների հարցումների և համակարգում առկա խնդիրների մասին, որոնք հանրության դժգոհությունն են հարուցում:




ՋԼՄ-ների և ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով հանրությանը շարունակաբար ներկայացնել համակարգում տարվող աշխատանքներն ու ձեռքբերումները:

Նշված աշխատանքներն իրականացվել են հնարավորինս արդյունավետ, որի մեջ զգալի դրական դեր է խաղացել ընկերության մյուս ծառայությունների հետ սերտ համագործակցությունը: Հատկապես պետք նշել գլխավոր տնօրենի Ժ/պ-ի հետ օպերատիվ կապը, որի միջոցով արագորեն լուծում ստացան լրագրողների բարձրացրած մի շարք հարցեր: Խոսքը մասնավորապես Կապանի ՋԱՆԳԵԶՈՒՐ, Ալավերդու ԱՆԿՅՈՒՄ 3 +, Երևանյան ԱԹՎԻ հեռուստաալիքների մասին է: Բաժնի աշխատանքի թերևս լավագույն գնահատականը ՊԱՆՈՐԱՄԱ.ԱՄ լրատվական կայքի հարցումն էր, որտեղ, նկատելով հանրության հետ կապերի ակտիվությունը, ենթադրել էին, որ Հանրային կապերի բաժնում տեղի են ունեցել կադրային փոփոխություններ:

Հանրային կապերի բաժինը որդեգրեց ավելի ակտիվ դիրքորոշում ՋԼՄ-ների հետ հարաբերություններում, ինչը դրական արդյունքներ տվեց: Այսպես, Մասիս քաղաքին մատակարարվող ջրի որակի վերաբերյալ ՀԵՏՔ լրատվական կայքի հրապարակմանը տված կոշտ, բայց օբյեկտիվ պատասխանը բերեց նրան, որ դադարեցին վերջինիս սխտեմատիկ բնույթ կրող հարձակումները ընկերության վրա, իսկ նույնատիպ պատասխանները մի շարք այլ լրատվամիջոցների ստիպեցին ավելի ուշադիր և կառուցողական լինել իրենց հրապարակումներում:

Ընկերության ֆեյսբուքյան էջն այսօր վերածվել է երկխոսության հարթակի: Հանրությանն է ներկայացվում ընկերության կյանքը, իրադարձությունները, հետաքրքրաշարժ պրոֆիլային նորությունները, իսկ այցելուների հարցերին տրվում են պատասխաններ: Օրինակ, հաշվետու ամսին ուշադրություն է դարձվել Մարզեր/համայնքներ - Վեոլիա Ջուր փոխօգնությանը, որի շրջանակներում լուծվում են շատ խնդիրներ, ինչպես նաև Պետություն-Համայնք համագործակցությանը սուբվենցիոն ծրագրերով ջրամատակարարման խնդիրները լուծելուն ուղղված: Որպես կարևոր նորություն է ներկայացվել ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերություն» համաձայնագրի շրջանակներում՝ «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» թեմայով կայացած միջազգային աշխատաժողովը, որի նպատակը ջրի որակին ներկայացվող ստանդարտների



վերանայումն է ու խստացումը:

Միջազգային թեմայով հրապարակումներից, որոնք կարող էին հանրության շրջանում հետաքրքրություն առաջացնել, հարկ է նշել «Քաղաքների համաշխարհային օրվա» կապակցությամբ Վեոլիա Գրուպի պատրաստած 2 տեսանյութի հրապարակումը, ինչպես նաև աշխարհում խմելու ջրի անբավարարության մասին պատմող հրապարակումը:

Մակայն հրապարակումների հիմնական մասն այնուամենայնիվ կազմել է հանրապետության տարբեր շրջաններից ստացվող տեղեկատվությունը տարվող աշխատանքների վերաբերյալ: Դրանց շարունակական բնույթը, բացի բուն նշանակությունից, էջի այցելուներին ցուցադրելով համակարգում տեղի ունեցող դրական փոփոխությունները, կամա թե ակամա խոչնդոտում է հանրության շրջանում Վեոլիա Ջրի նկատմամբ կանխակալ վերաբերմունքի ձևավորմանը:

Ակնկալվում է, որ նոյեմբերին կտրվեն Հանրության կապերի բաժնի առնչվող մի շարք հարցերի պատասխաններ, որոնք կարող են նպաստել հանրության հետ տարվող աշխատանքի արդյունավետության հետագա բարձրացմանը:



ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



## 5.1 Փաստաթղթերի մշակում

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտների պահանջները ՈԱՍ Ծառայությունը Ընկերության շահագործման տեղամասերի պետերի և վթարային խմբերի ղեկավարների համար մշակեց «Աշխատանքներ փակ տարածքներում», «Գազի հայտնաբերման սկզբունքները», «MicroClipX3 գազավերլուծիչի շահագործումը» թեմաներով կոմպլեքս դասընթացի նյութերը և մոտ 30 հարցից բաղկացած թեստը: Դասընթացը պլանավորվում է իրականացնել սույն թվականի նոյեմբեր ամսին:

## 5.2 Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն

● Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները Ծառայությունը կազմակերպեց թվով 19 քլորի կոնտեյներների տեխնիկական վկայագրման աշխատանքները:

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՕՐԵՆՔ) պահանջներով, Ծառայության անմիջական համակարգմամբ «Տեխնիկական անվտանգության փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ կողմից մեկնարկեցին Արտադրական Վտանգավոր Օբյեկտ հանդիսացող Ընկերության հեղուկ քլորով շահագործվող քլորակայանների, ՀՏԿ-ներում տեղադրված ամբարձիչ սարքավորումների (տելֆեր, միահեծան ամբարձիչ կոունկներ), ավտոկռանների, քլոր տեղափոխող մեքենաների թվով 116 ԱՎՕ-ի տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքները, որից 66 ԱՎՕ-ի (28 քլորակայան, 30 ամբարձիչ սարքավորում, 3 հեղուկ քլոր տեղափոխող ամբարձիչ ավտոմեքենա, 5 ամբարձիչ ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներն իրականացվեցին հաշվետու ամսում:

## 5.3 Դասընթացներ


● Ծառայությունը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, «Նարեկ» գիտահետազոտական ընկերության հետ համատեղ հոկտեմբերի 10-ից 18-ը անցկացրեց Ընկերության թվով 124 աշխատակցի (122 քլորի օպերատորների, քլոր տեղափոխող մեքենայի վարորդի և քլորակայանի տեխնիկական շահագործման պատասխանատու անձի) առաջնային և հերթական մասնագիտական որակավորման և «Առաջին օգնության ցուցաբերման մեթոդները» թեմայով դասընթացներ:

● Հիմք ընդունելով Ընկերության գլխավոր տնօրենի 30/09/2019 թվականի N 29Լ հրամանի պահանջները՝ Ընկերության Շիրակ և Արթիկ տեղամասերում շահագործման թիմերի համար կազմակերպվեցին «Գազաեռակցման և գազակտրման աշխատանքներին, ինչպես նաև թթվածնի և ագեսիլենի բալոնների, թմբկազլանների պահպանմանը, տեղափոխմանը և պահետակմանը ներկայացվող անվտանգության պահանջներ» թեմայով դասընթացներ:

● Հաշվետու ամսում ծառայությունն օժանդակեց Ընկերության նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբին կազմակերպելու և համակարգելու «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔ» ՍՊԸ կողմից՝ 1-85 հեռախոսակենտրոնի 17 և նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման 2 աշխատակիցների համար իրականացված «1-85 հեռախոսակենտրոնի զանգերի կառավարման համակարգ» դասընթացի հետ կապված աշխատանքները:




2018-2019թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



\* 2019թ. վերապատրաստված աշխատակիցների որոշ մասը մասնակցել է երկամսյա-եռամսյա դասընթացների: ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՖՀՄՈՒԿ հիմնադրամում կազմակերպված երկամսյա-եռամսյա դասընթացներին մասնակցել է Ընկերության 115 աշխատակից

2019թ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ մասնակցած աշխատակիցների քանակներն ըստ դասընթացների տիպերի



Անվտանգության դասընթացներ

Մասնագիտական որակավորման և կատարողականության բարելավման դասընթացներ

5.4. Մասնակցություն սեմինարին

● Հաշվետու ամսում Ծառայության պետը մասնակցեց ք. Վարշավայում կայացած Վեոլիա Գրուպի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) գոտու Բիզնես միավորների անվտանգության և առողջության պատասխանատուների ամենամյա սեմինարին, որին ներկայացավ զեկույցով: Սեմինարին մասնակցում էին Գրուպի ԿԱԵ 10 բիզնես միավորների 15 ներկայացուցիչներ, նպատակն էր համատեղ քննարկել 2019 թվականին կատարված աշխատանքները, Գրուպի կողմից սահմանված անվտանգության հիմնական կատարողական ցուցանիշները, առաջիկա 3 տարիների համար ռազմավարությունը և կանխատեսումները, բիզնես միավորների մասնագիտական ակնկալիքները ԿԱԵ գոտու ԱԱ պատասխանատուներից:



## 5.5. Մասնակցություն ԱԻ և ԶՊ վարժանքների

● Հիմք ընդունելով ՀՀ ԱԻՆ գլխավոր քարտուղարի 08/10/2019 թվականի թիվ 02/11.1.1/7109-19 գրությունը, հոկտեմբերի 29-ին Ընկերության ՈԱԱ Ծառայության աշխատակիցները «Միսիան» շահագործման տեղամասի աշխատանքային խմբի հետ մասնակցեցին Միսիանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «Արտակարգ իրավիճակում համայնքի կարողությունների կատարելագործման նպատակով ուսուսնավարժանքին»:

Ուսուսնավարժանքը մեկնարկեց Միսիանի համայնքապետարանում շտաբային հավաքով, որին մասնակցում էին ԱԻ միջոցառումներին մասնակցող կառույցների ներկայացուցիչները, ALTER ծրագրի արտասահմանյան գործընկերները, ԱԻ նախարարության ներկայացուցիչները:

Դաշտային պայմաններում խաղարկվեցին միջանկյալներ, որոնց ժամանակ փորձարկվեց աղետների

ռիսկերի կառավարման ոլորտի բոլոր շահառուների, ընդգրկված ծառայությունների գործնական գիտելիքներն ու կարողությունները, սահմանված դերերն ու պարտականությունները:

Մյն ավարտվեց ամփոփիչ քննարկումով, որի ժամանակ ծրագրի ղեկավարներն ու մասնակիցները կատարեցին իրենց դիտարկումները, առաջարկեցին բացթողումների շտկման տարբերակներ, արտասահմանյան գործընկերի կողմից ևս եղան դիտարկումներ:

● Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 17.10.2019 թվականի N01/1.1/04994-19 գրությունը, հոկտեմբերի 25-ին Ծառայությունը մասնակցեց Արագածոտնի մարզպետարանում տեղի ունեցած առանձնացված շտաբային ուսուսնավարժանքին, որից հետո կազմվեց համապատասխան զեկույց և ներկայացվեց ՀՀ Արագածոտնի մարզպետին և ուսուսնավարժանքի կազմակերպիչներին:



## 5.6. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 40 հիդրոտեխնիկական կառուցվածքներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում, ինչպես նաև կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ: Համագործակցելով ՋՍԳՍ ծառայության պատասխանատուների հետ, հնարավոր եղավ օպերատիվ կերպով արձանագրված թերությունները շտկել:





ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Հոկտեմբեր ամսվա ընթացքում Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքները

- Կազմակերպության բոլոր համակարգիչների վրա կիրառվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության կողմից տրամադրված Հատուկ Անվտանգության Խմբային Քաղաքականությունը՝ Malware Prevention Kit (Կարգավորումների հատուկ հավաքածու, որի կարգավորումն ու կիրառումը իրականացվում է Դոմենի կառավարման սերվերներից), որի նպատակն է ավելացնել համակարգիչների անվտանգությունը:
- Կազմակերպության բոլոր համակարգիչների վրա կիրառվել է նոր անվտանգության Խմբային Քաղաքականությունը՝ UAC կարգավորումների հավաքածուով, որի նպատակն է ավելացնել համակարգիչների անվտանգությունը:
- Տեղադրվել է նոր Microsoft Windows Server 2012 օպերացիոն համակարգով գործող սերվեր՝ Kaspersky Security Center 11, նոր հակավիրուսային համակարգի կառավարման համակարգի համար:
- Տեղադրվել և նախնական կարգավորվել է Kaspersky Security Center 11 նոր հակավիրուսային համակարգի կառավարման համակարգը:
- Ստեղծվել են անվտանգության քաղաքականություններ և առաջադրանքներ Kaspersky Security Center 11 հակավիրուսային համակարգի կառավարման համակարգում Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգի համար:
- Իրականացվել և վերախմբավորվել է դոմենի կառավարման սերվերների կառավարման տակ և՛ համակարգում առկա, և՛ գործող համակարգիչների, և՛ օգտատերերի՝ ըստ տեղակայման հասցեների, օպերացիոն համակարգի, համակարգչի տեսակի և այլ պարամետրերի:
- Կասեցվել են դոմենի կառավարման սերվերների կառավարման տակ և համակարգում առկա այն համակարգիչները և օգտատերերը, որոնք 60 օր և ավել չեն մուտք գործել համակարգ:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով գործող սերվերների համակարգային թարմացումներ:
- Իրականացվել է Microsoft Windows օպերացիոն համակարգով գործող սերվերների համակարգային թարմացումներ:
- Տեղադրվել և կարգավորվել է նոր NAT Server՝ դեպի ինտերակտիվ համակարգի ներքին և արտաքին տրաֆիկի ուղղիների տարանջատման և համակարգի անվտանգության բարձրացման նպատակով:
- Տեղադրվել և կարգավորվել են 16 Linux օպերացիոն համակարգով գործող սերվերներներ՝ 1-85 հեռախոսային կենտրոնի նոր համակարգի համար:
- Yerevandjur.am դոմենով գործող էլեկտրոնային նամակագրության համակարգը տեղափոխվել է yandex-ի կողմից տրամադրվող Mail for Business ծառայության վրա:
- Veoliajur.am դոմենով գործող էլեկտրոնային նամակագրության համակարգը տեղափոխվել է yandex-ի կողմից տրամադրվող Mail for Business ծառայության վրա:
- ԵՏՏՍ Կենտրոն տեղամասի տեղափոխման համար նոր տարածքում կատարվել են համակարգային ցանցի և հեռախոսացանցի մոնտաժ:


### 6.1 Ինտերակտիվ համակարգ

Հոկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խումբը կազմակերպել և իրականացրել է վերապատրաստումներ Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խումբը կազմակերպել և իրականացրել է վերապատրաստման դասընթացներ IUnetworks ընկերության հետ համատեղ՝ 1-85 ծառայության օպերատորների, ղեկավարի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սպասարկման մասնագետների հետ: Ողջ ընթացքը տեսաձայնագրվել է, պատրաստվել են ձայներիզներ, ուսուցման հոլովակներ: Հոլովակը նպաստելու է անձնակազմի խորը ուսուցման համար: Վերապատրաստման դասընթացի տևողությունը կազմել է 4-5 օր: IUnetworks ընկերության հետ համատեղ մշակվում է նոր CallCenter ծրագրային ապահովում, որը հնարավորություն կտա ավելի մեծ քանակի զանգերի պատասխանել, բարձրացնել զանգերի որակը և հսկել զանգ ընդունող աշխատակիցների որակավորումը, ինչպես նաև կառավարել լարվող զանգերի գործընթացը: Նոր ծրագրային համակարգը թույլ կտա կիրառել տեղեկատվական



նոր տեխնոլոգիաները և ապահովել լայն շրջանակ՝ տվյալների մշակման և կառավարման ասպարեզում: Կատարվում են ինտեգրման աշխատանքներ նոր ծրագրային համակարգի և ընկերության այլ համակարգերի հետ, որի արդյունքում զանգ ընդունող աշխատակիցը տեղեկատվության և տվյալների հասանելիության խնդիր չի ունենա:



● Ջրաչափերի փոխարինման գործընթացի ապահովման համար ստեղծվել է նոր ջրաչափերի փոխարինման ծրագրային միասնական հարթակ: Ծրագիրը նախատեսված է մեկ տեղում համակարգելու բոլոր դիմումները կապված ջրաչափերի փոխարինման հետ: Ինչպես նաև ծրագիրը թույլ է տալիս զանգերի, հաղորդագրությունների փոխանցում խմբավորել վերոնշյալ դիմումները մեկ տեղում: Համակարգը ավտոմատ մեխանիզմով բաշխում է դիմումները՝ ըստ կատարողների (տեխնիկական տնօրինություն, շահագործման տնօրինություններ և կապալառուներ): Համակարգը խմբավորում է և ըստ հրատապության է համակարգում հայտերը թույլ տալով ավելի օպտիմալ և արագ փոխարինել ջրաչափերը: Մշակվել է նաև ծրագրային գործիքակազմ, որը հնարավորություն է տալիս կատարողներին ամրագրել ջրաչափերի համարները՝ ըստ հայտերի, հետագա հաշվառման և ամփոփագրման համար: Ջրաչափերի կապարակնքման դեպքում (օրինականացման) համակարգը հայտերն ավտոմատ փակում է և համեմատում է ամրագրված ջրաչափերի համարների հետ: Անհամապատասխանությունների դեպքում՝ տեղեկացվում է համապատասխան ստորաբաժանուհիներին:

● Ակտեր  
Ինտերակտիվ համակարգի փոքր խումբի ակտերի դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հոկտեմբեր ամսվա ակտերի դեմ պայքարի ցուցանիշները:

<i>Խախտման արձանագրություններ</i>			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	խ/մ	դրամ
Հյուսիս	14	4,812	862,358
Էրեբունի	15	11,543	1,872,213
Շենգավիթ	3	8,815	1,586,693
Կենտրոն	5	1,654	300,656
Արաբկիր	32	11,579	2,039,905
Մաշտոց	4	1,547	246,085
Շահումյան	2	773	139,191
Քանաքեռ-Զեյթուն	9	3,352	569,654
ՋԿԲ	58	62,599	11,132,937
Լոռի	2	2,062	371,175
Շիրակ	26	12,038	2,074,395
Արթիկ	13	4,124	692,302
Արարատ	19	2,535	459,184
Աբովյան	30	11,964	1,903,912
Հրազդան	23	6,261	1,057,893
Աշոցք	3	1,547	250,544
Արտաշատ	28	6,859	1,091,864
Գավառ	8	1,847	306,991
Գորիս	8	4,501	789,317
Դիլիջան	6	3,458	622,492
Էջմիածին	17	9,269	1,628,547
Թալին	2	408	66,502
Իջևան	9	1,525	268,487
Կապան	1	258	46,397
Արմավիր	5	1,095	179,834
Ջերմուկ	1	258	46,397
Սևան	3	1,826	289,206
Վայք	1	258	46,397
Աշտարակ	6	4,541	821,080
Չարենցավան	2	838	128,172
Միսիան	6	14,790	2,304,565
Տաշիր	2	773	130,273
<b>Ընդամենը</b>	<b>363</b>	<b>199,708</b>	<b>34,325,618</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)  
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հոկտեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Տեղամաս	<b>Լաբորատորիա</b>			
	Միջամտություն		Մնասրբություն	
	քանակ	խ/մ	քանակ	խ/մ
Հյուսիս	5	1063.26	12	78.11
Էրեբունի	7	3561.24	26	105.12
Շենգավիթ	8	2534.64	39	289.93
Կենտրոն	6	2835.36	21	294.29
Արաբկիր	11	7142.1	38	347.66
Մաշտոց	16	30195.9	56	755.69
Շահումյան	4	1031.04	27	327.7
Քանաքեռ-Զեյթուն	1	1221.12	12	610.87
ԽՈՇՈՐ			2	4716.42
Լոռի	18	9504.9	37	876.03
Շիրակ	13	22154.64	20	275.52
Արթիկ	3	24631.56	11	105.37
Արարատ	3	498.6	17	3412.53
Արմավյան	8	9609.9	69	517.2
Հրազդան	2	687.36	11	313.85
Ալավերդի			2	20.72
Աշոցք			2	9.66
Ապարան			4	16.98
Արտաշատ			5	125.33
Բերդ	6	1374.72	16	12.03
Գավառ			5	23.1
Գորիս	2	1031.04	10	23.06
Դիլիջան	2	816.24		
Էջմիածին	1	708.84	4	110.37
Իջևան	2	204.06	2	0.44
Կապան	6	1546.56	20	78.12
Ճամբարակ			1	3.28
Մասիս	10	3811.62	28	715.52
Նոյեմբերյան	9	3608.64	60	229.55
Արմավիր	3	10407.6	57	456.36
Ջերմուկ			2	17.18
Սևան	10	1729.14	18	107.12
Վայք			3	26.58
Աշտարակ			7	44.56
Չարենցավան	9	3277.56	57	286.33
Սիսիան	7	2319.84	33	211.57
Ստեփանավան	2	300.72	1	5.5
<b>Ընդամենը</b>	<b>174</b>	<b>147808.2</b>	<b>735</b>	<b>15549.65</b>



«ՎԵՐԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am